


1.2.5. Տրանսպորտ

**Բեռնափոխադրումներ:** 2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել է 9.8%-ով:

**Բեռնափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

	2003թ. հունվար-ապրիլ	2003թ. հունվար-ապրիլը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2003թ. ապրիլ	2003թ. ապրիլը 2003թ. մարտի նկատմամբ, %
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը, հազ.տոննա այդ թվում՝</b>	<b>1752.3</b>	<b>109.8</b>	<b>484.2</b>	<b>96.3</b>
<b>Երկաթուղային տրանսպորտով որից.</b>	<b>614.0</b>	<b>113.6</b>	<b>186.3</b>	<b>110.4</b>
արտահանվել են բեռներ	62.5	118.4	16.5	92.2
ներկրվել են բեռներ	261.0	90.6	71.8	118.9
ներհանրապետական փոխադրումներ	290.5	145.7	98.0	108.3
<b>ավտոտրանսպորտով որից.</b>	<b>756.5</b>	<b>100.3</b>	<b>236.4</b>	<b>93.0</b>
արտահանվել են բեռներ	21.3	65.9	7.1	116.4
ներկրվել են բեռներ	87.3	112.1	27.8	124.7
ներհանրապետական փոխադրումներ	647.9	100.6	201.5	89.2
<b>օդային տրանսպորտով<sup>1</sup> որից.</b>	<b>2.3</b>	<b>100.0</b>	<b>0.6</b>	<b>85.7</b>
արտահանվել են բեռներ	0.7	87.5	0.2	100.0
ներկրվել են բեռներ	1.6	106.7	0.4	80.0
<b>խողովակաշարային տրանսպորտով</b>	<b>379.5</b>	<b>126.8</b>	<b>60.9</b>	<b>77.2</b>

**Բեռնափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվար-ապրիլին, %**



<sup>1</sup> Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված բեռնափոխադրումները:

2002թ. հունվար-ապրիլին բեռնափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտը կազմել է 33.9%, ավտոմոբիլայինը՝ 47.2%, օդայինը՝ 0.1%, խողովակաշարայինը՝ 18.8%:

**Երկաթուղային տրանսպորտ:** 2003թ. հունվար-ապրիլին ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել է 13.6%-ով: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալում հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 42.5% (2002թ. հունվար-ապրիլի 53.3 %-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 10.2% (2002թ. հունվար-ապրիլի 9.8%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 47.3% (2002թ. հունվար-ապրիլի 36.9 %-ի դիմաց):

Ըստ բեռների հիմնական տեսակների, 2003թ. հունվար-ապրիլին 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ հանքաքար գունավոր մետաղների փոխադրման ծավալն ավելացել է 2.6 անգամ, քարածխինը՝ 2.5 անգամ: Քիմիական և հանքային պարարտանյութերի փոխադրման ծավալը նվազել է 63.1%-ով, սև մետաղներինը՝ 58.8%-ով, անտառային բեռներինը (զերան, փայտանյութեր, ֆաներա և այլն)՝ 40.0%-ով, հանքային շինարարական նյութերինը՝ 29.6%-ով, ցեմենտինը՝ 28.4%-ով, սև մետաղների ջարդոնինը՝ 25.7%-ով, հացահատիկի և աղացվող մթերքինը՝ 24.3%-ով, նավթ և նավթամթերքինը՝ 21.4%-ով:

Վազոնների միջին օրական բեռնաթափումը 2003թ. հունվար-ապրիլին կազմել է 76 վազոն և 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ ավելացել 12 միավորով, իսկ բեռնումը կազմել է 52 վազոն և ավելացել 15 միավորով: Նույն ժամանակաշրջանում վազոնապտույտը կազմել է 11.9 օր և 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ արագացել է 3.9 օրով:

**Ավտոմոբիլային տրանսպորտ:** 2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-ապրիլի ցուցանիշի նկատմամբ աճել է 0.3%-ով, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 11.5% (2002թ. հունվար-ապրիլի 10.3%-ի դիմաց), դրանից ԶԶ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 7.2% (2002թ. հունվար-ապրիլի 6.8%-ի դիմաց), արտահանված բեռների բաժինը՝ 2.8% (2002թ. հունվար-ապրիլի 4.3%-ի դիմաց), դրանից ԶԶ ավտոտրանսպորտային միջոցներով կազմել է 13.1% (2002թ. հունվար-ապրիլի 4.0%-ի դիմաց), իսկ ներհանրապետական փոխադրումներինը՝ 85.7% (2002թ. հունվար-ապրիլի 85.4%-ի դիմաց):

**Օդային տրանսպորտ:** 2003թ. հունվար-ապրիլին օդային տրանսպորտով փոխադրված բեռների ծավալը 2002թ. հունվար-ապրիլի ցուցանիշի նկատմամբ մնացել է անփոփոխ և կազմել է 2.3 հազ. տոննա, որից հանրապետություն ներկրված բեռների բաժինը կազմել է 69.6% (2002թ. հունվար-ապրիլի 65.2%-ի դիմաց), իսկ հանրապետությունից արտահանված բեռների բաժինը՝ 30.4% (2002թ. հունվար-ապրիլի 34.8%-ի դիմաց):

**Խողովակաշարային տրանսպորտ:** 2003թ. հունվար-ապրիլին խողովակաշարային տրանսպորտով հանրապետություն ներկրված բնական գազի բեռնափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-ապրիլի ցուցանիշի նկատմամբ աճել է 26.8 %-ով:

**Բեռնաշրջանառություն:** 2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ ավելացել է 27.6 %-ով:

**Բեռնաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**


	2003թ. հունվար-ապրիլ	2003թ. հունվար-ապրիլը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2003թ. ապրիլ	2003թ. ապրիլը 2003թ. մարտի նկատմամբ, %
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը, մլն.տոննա-կմ այդ թվում՝</b>	<b>690.6</b>	<b>127.6</b>	<b>133.0</b>	<b>84.7</b>
Երկաթուղային տրանսպորտով	158.9	128.5	45.9	105.8
ավտոտրանսպորտով	19.1	150.4	4.6	65.7
օդային տրանսպորտով	2.0	125.0	0.6	150.0
խողովակաշարային տրանսպորտով	510.6	126.8	81.9	77.1

**Ուղևորափոխադրումներ.** 2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2002թ. հունվար-ապրիլի ցուցանիշի նկատմամբ աճել է 11.3%-ով:

**Ուղևորափոխադրումների ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

	2003թ. հունվար-ապրիլ	2003թ. հունվար-ապրիլը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2003թ. ապրիլ	2003թ. ապրիլը 2003թ. մարտի նկատմամբ, %
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորափոխադրումների ծավալը, հազ. մարդ այդ թվում՝</b>	<b>54777.4</b>	<b>111.3</b>	<b>14379.8</b>	<b>98.5</b>
Երկաթուղային տրանսպորտով	324.0	110.9	89.7	103.9
ավտոտրանսպորտով	46668.7	114.7	12326.7	99.3
օդային տրանսպորտով <sup>1</sup>	222.4	107.8	63.2	114.9
էլեկտրատրանսպորտով	7562.3	94.5	1900.2	93.0

**Ուղևորափոխադրումների կառուցվածքն ըստ տրանսպորտի առանձին տեսակների 2003թ. հունվար-ապրիլին, %**



<sup>1</sup> Ցուցանիշներում ներառված են նաև այլ երկրների ինքնաթիռներով իրականացված ուղևորափոխադրումները:  
«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-ապրիլին»

**1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ**

2002թ. հունվար-ապրիլին ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում երկաթուղային տրանսպորտինը կազմել է 0.6%, ավտոմոբիլային տրանսպորտինը՝ 82.7%, օդային տրանսպորտինը՝ 0.4% և էլեկտրատրանսպորտինը՝ 16.3%:

Էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունի մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների ծավալը, որը 2003թ. հունվար-ապրիլին կազմել է 67.0%, իսկ տրոլեյբուսով՝ 19.9%, տրամվայով՝ 10.9% և ճոպանուղով՝ 2.2 %:

**Ուղևորաշրջանառություն:** 2003թ. հունվար-ապրիլին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ աճել է 9.2 %-ով:

**Ուղևորաշրջանառության ընդհանուր ցուցանիշներն ըստ տրանսպորտի առանձին տեսակների**

	2003թ. հունվար-ապրիլ	2003թ. հունվար-ապրիլը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2003թ. ապրիլ	2003թ. ապրիլը 2003թ. մարտի նկատմամբ, %
<b>Ընդհանուր օգտագործման տրանսպորտով ուղևորաշրջանառության ծավալը, մլն. ուղևոր-կմ այդ թվում՝</b>	<b>796.0</b>	<b>109.2</b>	<b>191.6</b>	<b>91.9</b>
երկաթուղային տրանսպորտով	12.0	88.9	3.3	100.0
ավտոտրանսպորտով	579.7	116.9	141.5	95.0
օդային տրանսպորտով	173.8	93.0	39.1	81.3
էլեկտրատրանսպորտով	30.5	94.7	7.7	93.9

**Տրանսպորտային պատահարներ:** Հանրապետությունում 2003թ. հունվար-ապրիլին ճանապարհատրանսպորտային պատահարները 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ նվազել է 6.5 %-ով:

**Ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշները**

	2003թ. հունվար-ապրիլ	2003թ. հունվար-ապրիլը 2002թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %	2003թ. ապրիլ	2003թ. ապրիլը 2003թ. մարտի նկատմամբ, %
<b>Ճանապարհատրանսպորտային պատահարներ, ընդհանենը</b>	<b>231</b>	<b>93.5</b>	<b>52</b>	<b>85.2</b>
Ջոհվել են, մարդ	62	126.5	22	81.5
Վիրավորվել են, մարդ	304	102.7	57	67.1